

12. ՓՈՔՐԻԿ ԳՈՂԸ

Կըլի, չըլի էրկու ախպեր: Էտ էրկուսն էլ կող կըլեն, հըմեն օր կէթան, թաքավորի խզինան կըկողնան. էնքան թաքավոր ղարավուլ կըտնի, չի նա պոնել, անճարութոնեն ղըռ կըլցի:

Մե ախպերը կընի մեչ, կըխեխտվի, ուր ախպոր կասի.—Իմ կլոխ կոի՛, տա՛ր, որ մնա, առատունը կըճաչնան:

Ախպեր դար կլոխ կըկոի, կըտանի:

Տարը մե տղա կըլի:

Կակոն կասի ուր ախպոր լաճուն.—Ի՞չ կուզես ըլես:

Կասի.—Իմ խերն ի՞նչ է լե, ես էլ էն կըլեմ:

Կասի.—Տու կողըթոն անել գինա՞ս:

Կասի.—Կուանեմ:

Կըլի, մե ղչան պոնեն ղչան փառն էնենց կըքաչի, որ ղուչ խաբար չի ըլի:

Ստեփ կէթան, որ մեռելը պերեն:

Մե էչ կըտանեն կըչերով, ղարավուլքերի խետը կըճանաչվեն, կասեն.—Հա՛րեյ, նստե՛ք:

Տանք չեն նստե:

Կասեն.—Ծեր մեռել մեր էչուն կուտի:

Տանցը կըխմցուցեն, ղարավուլքեր կըքնեն, տանք մեռելին կըպառնան էչուն, էչ կըվերցի, կըկա տուն:

Տանք կըլեն, ղարավուլքերուն կասեն.—Ծեր մեռել մեր էչուն կերիր ի:

Տանք էլ կավատան, մե պարկ վսկի կըտան տանց, տանք կըկան տուն: Էտ տղայի կակոն կըմեռնի, զինք չատ կողըթոն կանի խզինայեն:

Տրկեց թաքավոր էտ թաքավորի վրան կըծղզա կասի.—Ի՞չթարզ թաքավոր ես, որ չես նա մե կողի պոնե:

Թաքավորը ջառ կըտա կանչել.—Էտ կող վա՞վ ի, ես դարը խալաթ կըտամ:

Էտ տղան կասի.—Ես եմ:

Թաքավորը կըզարմանա տար փստկութնի վրան, տար խալաթ կըտա.

Թաքավորը կասի.—Գինա՞ս էն Թաքավորի խզինայեն կողնալ:

Տղան կասի.—Կուգե՞ս ուրը կողնամ պերեմ: Էրկու մարթ տու ընձի խետ, ինան մե ծի, մե Թաբութ՝ զանգլայքերի խետ:

Էտ զանգլայքեր կըկախի, կէթա մեկէլ Թաքավորի տուն, ուրը Թափ կըտա:

Թաքավոր կասի.—Տու վա՞վ ես:

Կասի.—Ես Կապրե Հրիչտակն եմ, եկիր եմ քեզի տանեմ տրախտ:

Էնց էտ չորերով տղան տարը կըտնի Թաբութի մեչը, կըտնի ծի-ու վրան, կըվերցի կէթա:

Ճանբախ Թաքավոր կխարցուցի.—Հալա չա՞տ կա:

—Զէ՛, կո մոտացանք,—կասի:

Մեկէլ Թաքավորն էլ մեյդանի մեչ ուր ըմեն ժողովուրթ կըլը-ցի, տղան Թաբութ կըպերի, էտ ժողովուրթի տեմը կըպացի, ըմեն կըծղզան Թաքավորի վրան:

Էն մեկէլ Թաքավոր կասի.—Հայ իմ խզնան էր կողնալի, մկա քեզի կողցավ, տսնաս ե՞ս, տու ընձի վրա ես էր, կո քո կլխին էկավ: